ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ ☎ 093476682
Խնկոյան համայնք, փողոց 1 թիվ 19
Էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

<<21>> հոկտեմբերի 2019թ.

N 224

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ եմ ներկայացնում Խնկոյան համայնքի ղեկավարի 14.10.2019թ. N 19 որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցեն՝ Խնկոյան համայնք 1 փ. 19 շ.
հեռ. 093 476682, էլ. փոստ Khnkoyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հոկտեմբերի 2019թ. թիվ 19

06-047-0029-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1 կետի 1) ենթակետով, 43-րդ հոդվածի 1 կետի 1) ենթակետով, Հայաստանի Հանրապետության գործող քաղաքացիական օրենսգրքի 209-րդ հոդվածով, «Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման» մասին օրենքի 2-րդ հոդվածի պահանջով, նույն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի 2387 որոշմամբ և հիմք ընդունելով Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահի 01.06.2010 թվականի թիվ 186-Ն հրահանգի պահանջները, Խնկոյան համայնքի ավագանու 08.10.2019 թվականի թիվ 41 որոշումը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Ձ-ի կողմից տրամադրված հատակագիծը և նկատի ունենալով, որ տվյալ հողամասը տիրապետում, տնօրինում, օգտագործում է Խնկոյան համայնքը, գտնվում է Խնկոյան համայնքի հաշվեկշռում, արտացոլված է առաջին պետական գրանցման ժամանակ կազմված քարտեզում և քանի որ տվյալ կիսակառույցը կառուցված է քաղաքաշինական նորմերին համապատասխան, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, դրա պահպանում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված ցանկում, ուստի ելնելով վերոգրյալից՝

որոշում եմ.

1. Օրենքի ուժով վերականգնել և ճանաչել Խնկոյան համայնքի սեփականության իրավունք 06-047-0029-0001 ծածկագրի տակ գտնվող 0.030624 հա հողամասի և նրա վրա 1990 թվականին կառուցված կիսակառույց 238,6 քմ վարչական շենքի, 9,6 քմ բաց պատշգամբի նկատմամբ:
2. Վերը նշված անշարժ գույքերին տրամադրել Խնկոյան համայնք 1-ի փողոց թիվ 32 հասցեն:
3. Դադարեցնել 02.10.2019 թվականի Խնկոյան համայնքի ղեկավարի թիվ 18 որոշման պահանջները:
4. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը հիմք վերը նշված անշարժ գույքերին, որպես Խնկոյան համայնքի սեփականություն գրանցում տալու համար:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 14
Խնկոյան համայնք